

Քաղվածք

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գանձակ գյուղական համայնքի
հասարակության ընդհանուր ժողովի թիվ 1 արձանագրությունից:

20.01.2012թ

Ժողովին մասնակցում էր ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի գյուղատնտեսության և
բնապահպանության վարչության պետ՝ Վ. Հովհաննիսյանը:

Օրակարգ - Գանձակի համայնքի 2011 թվականի բյուջեի կատարման
տարեկան հաշվետվության մասին
/Ձեկ. Վ. Հարությունյան/ գյուղապետ/

Ձեկուցողը նշեց, որ աշխատակազմի ամենօրյա հետևողական և նպատակասլաց
աշխատանքի շնորհիվ համայնքի 2011թ. վարչական բյուջեի սեփական եկամուտների
փաստացի մուտքերը կազմում են 14619.4 հազ. դրամ նախատեսված 14015.4 դրամի դիմաց,
ինչը տոկոսային արտահայտությամբ կազմում է 104.3%:

Ըստ եկամտատեսակների պատկերն հետևյալն է՝ հողի հարկ 8671.7 հազ. դրամ կատարվել է
9609.8 հազ. դրամ կամ կատարվել է 110.8%-ով, շենք շինությունների 661.1 հազ. դրամի
դիմաց կատարվել է 859.7 հազ. դրամ՝ 130.0%, փոխադրամիջոցներից հարկ 3462.8 հազ.
դրամ կատարվել 3292.4 հազ. դրամ 95.1%:

Տեղական տուրքը կատարվել է 80.7%, հողի վարձավճար 56.7%, վարչական տուգանք
503.3%, պատվիրակված լիազորությունները 50%, համահարթեցման դոտացիա 100% և
նպատակային հատկացում /սուբվենցիա/ 100%:

Բյուջեի ծախսային մասը վարչական և ֆոնդային ընդամենը կազմել է 93668.0 հազ. դրամ,
որից կատարվել 80821.7 հազ. դրամ: Գումարները հիմնականում ծախսվել են
գյուղապետարանի, մանկապարտեզի, երաժշտական դպրոցի, գրադարանի պահպանման,
համայնքի մշակույթի տան տանիքի հիմնանորոգման, կոմունալ ծառայությունների, շրջակա
միջավայրի պահպանության, թիվ 1 միջն. դպրոցի 1 դասարանի վերանորոգման, թիվ 2 միջն.
դպրոցի թվով 4 դասարանների ջեռուցման համակարգի անցկացման, համայնքի սոցիալապես
անապահով ընտանիքներին դրամական օգնություն տրամադրելու և բազմաբնույթ այլ
խնդիրների լուծման նպատակով:

Գումար էր նախատեսված նաև համայնքի Հայրենական Մեծ Պատերազմի զոհվածների
հուշարձանի կառուցման և համայնքի վերին թաղով անցնող սելավատարի վրա կամուրջ
կառուցելու համար, սակայն այդ աշխատանքները մնացին անավարտ աշնանային վատ
եղանակների պատճառով, որոնք նախատեսել ենք ավարտին հասցնել 2012թ.-ին:

Կատարված աշխատանքները գնահատվում է լավ:

Գանձակի գյուղապետ՝

Վ. Հարությունյան

